



ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF STEPANAVAN

Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք Ստեփանավան, Երիտասարդական 47
հեռ (+374) 93315108
Էլ. փոստ info_stepanavan@sarhus.am, manya_lore@yahoo.com

N002-19

9 հունիսի 2014թ.

Ստեփանավանի ՃՇՇ ՍՊԸ
տնօրեն Հ.Հովիվյանին
Ստեփանավանի Օրհուս կենտրոնի
համակարգող Մ. Մելիքջանյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Հովիվյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագիրը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, խնդրում եմ Ձեզ, Ստեփանավանի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Խնդրում ենք բացատրել ինչի՞ հիման վրա և ինչ եղանակով է Գյուլագարակ – Ստեփանավան հատվածի ճանապարհի եզրերին կատարվում բարդիների էտ տարվա այս ժամանակահատվածում:

2. Ի՞նչ նպատակով է նախատեսվում օգտագործել հատումների արդյունքում առաջացած փայտանյութը:

<<Տեղեկատվության մատչելիության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության/ 30-օրյա ժամկետում):

Տեղեկատվության տրամադրմանը մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Ստեփանավանի շահագրգիռ հասարակության անունից և խնդրանքով,
Հարգանքներով
Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգող

Մանյա Մելիքջանյան